ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հուլիսի 17-ին, N 267 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԲՅՈՒՐԱԿԱՆԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԷԼՄԻՐԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին կետով, 172-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 16-րդ հոդվածի 1.5 կետով և հիմք ընդունելով Է. Գալստյանի 2025 թվականի հուլիսի 16-ի դիմումն ու անաշխատունակության թերթիկը /սերիա՝ WW N 091094/ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Բյուրականի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Էլմիրա Գալստյանին 2025 թվականի հուլիսի 16-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 2-ը ներառյալ համարել հղիության և ծննդաբերության արձակուրդի մեջ:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Բյուրականի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի

ժամանակավոր պաշտոնակատար նշանակել ուսուցչուհի Վարսենիկ Վարդանյանին՝ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր երեք ամիս ժամկետով:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3510860535

X

Պարտականությունները կատարող՝ Signed by: GRIGORYAN ARMEN 3510860535

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ